# Արձանագրություն N 3

**ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ի կարիքների համար ՀՀ ԱՄԱՀ-ԱԿԾ-ՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցումով գնման հայտերի բացման և գնահատման նիստի մասին**

***Ք.Ապարան*** ***«03» Դեկտեմբերի 2018թ.***
**ժ10:00**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝ | **Սամսոն Շահինյան – Աշխղեկ-վարպետ** |
| Հանձնաժողովի անդամներ՝ | **Սանամ Մեղոյան – Հավաքագրող-գանձապահ**<br>**Գագիկ Մկրտչյան - Վարորդ** |
| Գնումները համակարգող՝ | **Միեր Ամիրյան** |

**Օրակարգ**

1. **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին**

**Ընդունել ի գիտություն որ.**

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է դրական եզրակացություն՝ այն է, մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:*

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:*

### 3. ՀՀ ԱՄԱՀ-ԱԿԾ-ՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին և 2-րդ կետերը՝ «ՀՀ ԱՄԱՀ-ԱԿԾ-ՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ –ին՝ 1-3 չափաբաժինների համար:

3.2 Համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 10-րդ հոդվածի՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը. և հաղթող մասնակցին տրամադրել պայմանագրի նախագիծը:

3.4 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պայմանագրի կնքման հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ________________ Սամսոն Շահինյան

հանձնաժողովի անդամներ՝ ________________ Սանամ Մեդոյան

________________ Գագիկ Մկրտչյան

Գնումները համակարգող՝ ________________ Միեր Ամիրյան